

Հայն իր Աստուածն ունի, իր սուրբերն ունի: Հոն դարձեալ կը լսեն Միսիքարի փարոզը՝ ինչպէս Յիսուսի լերան պատգամները: Սէրը կու գայ զիրենք անմահացնելու: Ու դարեր անցան այն օրէն՝ երբ այս դամբանն Յիսուսի խորան դարձաւ, Տիրամօր ձեռքը դպաւ անոր. հրեշտակները վրան գրեցին:

ՔԵՐՈՎՐԷՅԱԿԱՆ ՔՆԱՐ – ՀՈԳԵՂԷՆ ՏԱԻԻՂ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՄԵԻԱՆԷՆ Ս. ՂԱԶԱՐ

ԱՌԱՐՈՑ ԼՈՒՍՈՅ

ԱՌԱՐՈՑ ԼՈՒՍՈՅ

Ճառագայթ մ'ինկաւ իմ դէմքիս վրան,
Պատուհանս է բաց, իմ սիրտս է ամառ,
Հողիս՝ պաղատանք, լուսեղէն օրուն.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Թռչուններու հետ կու գայ այգաբաց,
Ամէն կողմ բոյն է, հրճուանքն աւլըցուն.
Քրիստոնեայ է միշտ տիեզերքն անծայր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Քարը ձեւ առաւ, գոյն գոյն ծաղիկներ,
Լոյսին մէջն ալ կայ շնորհք սրբարար.
Իրեն գեղն արդէն նըւագ է ու սէր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ի խորոց սրտի՝ խօսք ընդ Աստուծոյ,
Երկինք եւ երկիր կը կանչեն իրար,
Ամէն սիրտ ունի նոյն շողը սիրոյ.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ո՛հ, ի՛նչ հոգեթուլ առաւօտ է այս,
Ուր չըկայ պատրանք եւ մտքի խաւար.
Կեանք է ամէն կողմ եւ սիրտ է աշխարհս.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Արփին կը ցնծայ հորիզոնէն վեր,
Զատիկ է կարծես, կերոն՝ ամէն ծառ,
Բընութիւնն է խոկ, տիեզերքն է սէր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ինչո՞ւ ամէն օր կու դայ մութ գիշեր,
Ինչո՞ւ ինքն Աստուած մեղ յայտնի չ'ըլլար.
Երգով ապրէինք, օդին մէջ ձեռքեր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

ԼՃԱԿԻՆ ՎՐԱՅ

Լըճակին վըրայ կը ծրփայ կղզին,
Կը նային ծառերն անցնող կոնտուրին.
Երգ մը վիպական, ոսկի երիզով
Ալիքէ ալիք կ'անցնի երազով:

Ո՛հ, ի՛նչ քաղցըր է լըճակին վըրայ
Ըլլալ նայանուշ, ըլլալ լուսընկայ.
Բռնել զեփուռին թեւերէն վափուկ,
Վայրկեան մը սիրել կեանքը խոստափուկ:

Պէտք չըկայ երազ, սիրոյ զառանցանք.
Գեղեցիկ է լիճն եւ իրական կեանքն.
Հոգիս կոնտուլ մ'է՛ ո՞ր հեշտ կը սահի,
Այնքան ժպտադէմ, ո՞ր շող կը թըւի:

Թիերու ճողփիւնն հաւասար չափով,
Կարծես վարձակի պարն է զոյգ տափով.
Կ'իջնեն բեկբեկուն ջուրին մէջ ոսկի,
Վեր կը բարձրանան գոհարներով լի:

Ու կոնտուրավարն՝ իր դէմքն երկընքին,
Սիրերգն իր կ'երգէ խանդով հեշտագին.
Դէպի սուրբ Մարկոս, դէպի Վենետիկ.
Կոնտուրն է հիմա սեւ կէտ մը փոքրիկ:

Ես երազ չունիմ, աչքերս են լեցուն,
Զքնաղ օրերով համակ ասմաղուն.
Լըճակին վըրայ կը ժպտի կղզին
Ջուրին մէջ ոտքերն ու դէմքն արեւին:

ՊԱՐՈՂ ԱԼԻՔՆԵՐ

Պարիսպին տակ ամէն օր,
Ալիքը քոյր ալիքին,
Նայանուշի պէս աղուոր՝
Պար կը բռնեն ու կ'անցնին:

Թեւն իր արփին կ'երկարէ,
Մօր մը նըման սիրելի.
Ու մատներով ոսկիէ,
Մանեակ մանեակ կ'ոլորուի:

Վարդը վերէն կը ժպտի
Դէմքը ջուրին մէջ ցոլուն,
Ուրիշ պարտէզ կը բացուի
Պարիսպին տակ ասմաղուն:

Ու կը պարեն, կը պարեն
Աղջըկայ պէս շրջմուրիկ.
Իրարու թեւ կը մըտնեն՝
Մէկը միւսէն ցոլացիկ:

Ապա յանկարծ խոյս կու տան
Դէպի բացերն հերարձակ.
Եւ հեւ ի հեւ կը դառնան,
Ոսկի ցոլքեր՝ թեւին տակ:

Նոյն ծրփանքն է անդադար
Եւ թեթեւուն երթեւեկ.
Պատ չէ հիմա, այլ մարմար,
Արեգակին հետ բեկբեկ:

Որքան նըման են սրտին
Տենչանքներով բարախուն.
Բայց չեն գիտեր թէ կեանքին
Կան եւ օրեր փոթորկուն:

ՔԱՐԱՓԸ

Կու գան ու կու գան կոնտոլներ ծրփուն,
Թեթեւ կարասներ՝ թիկունքն ալիքին,
Կը հըպին մարմար ճերմակ քարափին.
Առանց մեզ տալու համբոյրի անունն:

Ալիքն անհանդարտ կու գայ, կը փշրի,
Փրփուրն հարսնական շրջարշ կը փոխուի.
Կը պատէ քարերն ու ծիածանի
Շօթնեակ դոյներով պահ մը ցոլք կու տայ:

Քարափն է կարծես թափանցիկ մարմին,
Շողերն արեւուն՝ ոսկի պատմութիւն.
Ինչպէս որ էին ջրանոյշներն հին
Որոնց պատմեցին կեանքը վիպական:

Քարափը դէպի լըճակը դարձած,
Ձեռքը կ'երկարէ անցնող դարձողին.
Վանքի սիրտն ունի, աչքերն՝ երկիւղած.
Բարի է, կ'ըսեն, Հայերու կղզին:

— Հայոց կղզին է, կ'ըսեն իրարու,
Խորհուրդ կը տեսնեն եւ հին պատմութիւն.
Արեւելքն է հոն, փառքերով թաղուն,
Եւ Յայտնութեան դիրք կու տան իր անունն:

Քարափն է ծաղկած, որմերը կարմիր,
Ճերմակ շուշան կայ, կան վարդեր խոշոր.
Որոնց ցոլացումն երբեք չի դադրիր
Կապոյտ լըճին մէջ՝ կապոյտէն աղուոր:

Ու քարափն անշարժ կը նայի հեռուն,
Ինչպէս վաղեմի աստուած մը քարէ.
Ու միշտ կը սպասէ որ գայ Հայութիւն,
Թեւերն իր սիրոյ կղզին երկարէ:

ՆՈՃԻՆԵՐՈՒ ԶԱՄԲԱՆ

Նոճիներու ճամբան հանդարտ կը քալէ,
Խորհուրդով լի, նրման անցած օրերուն.
Թանձր շուքն է՝ լաշն վերարկու տեսերուն.
Կ'երթայ անվերջ գերդ սեւ հանդերձ թաւիչէ:

Կ'երկարի միշտ կապոյտներու մէջ երկու,
Լիճ կայ ասդին, անդին գրկած է դափնի.
Ջայն կ'եղերեն հարիւր նոճի կողք կողքի,
Հարիւր սիւներ՝ երկինքը վեր բռնելու:

Վանականներ լըճիկ կու գան ու կ'երթան,
Ամէն մէկն իր մատեանն ունի դրաբար.
Ձեն երազեր, այլ սուրբ կեանքի սիրահար,
Թերեւս միշտ Նարեկացին կը կարդան:

Մէկ վանականը միշտ միւսին հետ ընկեր.
Լոյս են կարծես Մըխիթարի տեսիլքով.
Աչքերուն մէջ ծիածաններ հմայքով,
Պէտք է կոչել եղբայրութեան անուններ:

Նոյնն է ճամբան եւ մըտերիմ ամէնուն.
Ես սիրեցի հետքերն անոնց որ գացին.
Ինծմէ առաջ, ինծմէ յետոյ եկողին
Սէրըս տըւի եւ բարութիւնն իմ սրտին:

Տենչեր ունին՝ արեգակներ ըստեղծել,
Ճըրադ ըլլալ աչքերուն մէջ Հայութեան.
Եւ գըթութեամբ մերձենալ մեր պատմութեան,
Յիսուսաբար վէրքեր լըւալ ու բուժել:

Ամէն մէկն իր հոգիին մէջ կը տեսնէ
Արշալոյսներ՝ որոնց ճամբան բռնեցին.
Բոկոտն էին, մեղքի կօշիկն հանեցին,
Սուրբ էր ուղին, հըրաշքն էր լոյս հըրաշքին:

Ու կը քալեն լուռ, անասան եւ խոկուն,
Նոճիներուն վեհութենէն անբաժան.
Նարեկացին պիտի սիրէր անպայման,
Իր աղօթքով ցանել զըմուռս եւ ցորեան:

Քանի մրմունջ եւ քանի սէր յանձնեցին,
Օղին, հովին, թռչուններուն անանուն.
Մէկ է կղզին, կապոյտն է մէկ, մէկ՝ լեզուն,
Գիշերն ամբողջ աստղերով լի ծիրկաթին:

Նոճիններուն ճամբան հանդարտ կը քալէ,
Խորհուրդով լի, նըման անցած օրերուն...

ՄԵՆՈՒԹԵԱՆ ՊԱՀԵՐ

Պահեր կան հոս միանձնական լըռութեան,
Ուր վանականն իր սրտին հետ առանձին
Կը խորհի կեանքն եւ անոր շուքն անանուն,
Ինչ որ կարգաց մատեաններու մէջ նախկին:

Կարծես աչքերն հողին երեք չեն դաշիր,
Այնքան ամփոփ կ'անցնի պուրակ առ պուրակ.
Շուրջը ծաղիկ, անդին լըճի շուրթն անծիր,
Կ'երազէ կեանքն երկնքի պէս անապակ:

Թեւին տակ միշտ մատեան մ'ունի հընադոյն.
Ձեմ գիտեր թէ արդեօք Նարեկն է խոհուն,
Կամ Անյաղթն է, մեր աշխարհի իմաստունն,
Որ կարօտ են վանականի մեկնութեան:

Հանդերձ մը թուիս զինքն աշխարհէն կը զատէ,
Թեթեւ ըստուեր՝ որ կը շրջի ամէնուր.
Խոհերն իր սուրբ այնքան գուրծով կը պատէ,
Կարծես ըլլար սիրոյ թեւին տակ համբոյր:

Եւ լըռութիւնն հանդարտօրէն կը տիրէ
Ծառերուն տակ, ճամբաներուն ըստուերոտ.
Եւ վանականն այս պահն է որ կը սիրէ,
Կը զգայ Աստուած դեռ առկա իրեն մօտ:

Լուռ քաղցրութիւն որ անխըռով կ'երկարի,
Հողին փարած, գրկած ծաղիկ, գրկած ծառ.
Ձայն մը թաքուն երկինքներէն կը հասնի,
— Երանի՛ր քեզ, որ ասլընցար ինձ համար:

ՇԱՏՐՈՒԱՆԸ

Յօղեր կ'իյնան,
Շողեր կ'իյնան.
Ինչպէս գոհար
Երկինքէն վար.
Ջուրի երեսն,
Երազի պէս,
Կը փշրին
Եւ կ'անցնին:

Բայց վերըստին
Կը շղթայուին,
Թեւերն արծաթ.
Իրարմէ զատ
Ջերդ քընարի
Լար երգալի,
Որ սրտի
Կը փարի:

Յօղեր կ'իյնան,
Եւ մեղմածայն
Շիթ շիթի հետ
Կ'երգեն յաւէտ
Աւազանի
Գովքն երանի,
Նոյն երգով
Նոյն սրտով:

Շատրուանի
Շրթներն ոսկի
Կ'օծէ արփին
Արշալոյսին.
Եւ իրիկուան
Գոյնով ծիրան
Կը մընայ
Ջերդ հինայ:

Եւ հազար մէկ
Աստղեր բեկբեկ
Կը թօթափին
Մէջը ջուրին,
Ջերդ ջըրանոյշ,
Դէմքեր անոյշ
Կը խայտան
Լըռեկայն:

Ո՛հ, ի՛նչ բերկրանք:
Ի՛նչ անըրջանք
Շատրուանին
Շուրջ կը յածին,
Երկինք մը կայ
Ջուրին վըրայ
Ամբողջ գոյն
Արեւուն:

Սիւքը կ'անցնի
Գաղտնագողի,
Շափիւղայէ
Թեւեր կ'առնէ.
Օղն է ցնծուն
Ջերդ հարսնցուն,
Եւ միշտ զով
Թովհանքով:

Եւ շատրուանն,
Մօր մը նըման,
Օրօր կ'երգէ,
Սրտով կ'երգէ
Ծաղիկներուն,
Թռչնիկներուն,
Լըճակին,
Կըղզեկին:

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ

Ես լոյսի տեղ հազար ծաղիկ կը փնտռեմ,
Հազար նըւադ կը սիրեմ.
Իմ պատուհանս բաց է ինչպէս սրտի դուռ,
Դէպի այգին անտխուր:

Ոմանք դէպի լայն ջրանցքներ կը դառնան.
Դէպի Անդրին ուրիշներ,
Կը հաղորդուի մեզ հետ երկինքն անխորան՝
Տեսիլքին հետ վանական:

Լոյսը կու գայ հողիի պէս թափանցիկ,
Գեղարուեստ է տունն արդէն.
Գեղարուեստ են սիւն եւ կամար պարանցիկ
Եւ հեռու են աշխարհէն:

Ո՛րքան քաղցր է այդուն դուռել արեգակն,
Եւ թեւն իյնալ կարօտով.
Քանի մը ժամ կը մընան մեր աչքեր փակ,
Ձենք շատանար նայելով:

Եւ ի՛նչ կուրծքի ու թոքերու ելեւէջ,
Կղզիի թարմ այս օդին.
Կու գայ գեփի՛ւռը, ծաղիկներ ափին մէջ,
Բոյրը կու գայ խաղողին:

Թռչուններու կ'անցնի երա՛մը զըւարթ,
Փըչուր մը երդ ձգելով.
Եւ վանականը մըտերիմ, խանդակաթ
Կը բարեւէ լմայն ձեռքով:

Պատուհաններ այստեղ դըրաւ Մըխիթար
Որ սէր եւ լոյս միշտ մտնեն.
Երանի՛ է այն հայուն՝ որ այս աշխարհ
Կը տեսնէ մեր կղզիէն:

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆԻ ԲԼՈՒՐԸ

Մարդ մը կու գար այստեղ, կ'ըսեն, ամէն օր,
Ձեռքերուն մէջ խաղաղութեան ձիթենի.
Կու գար տրտում, աղջկայ պէս մեղաւոր
Երգով լալու սիրոյ խոցեր զղջումի:

Ինչո՞ւ եկաւ այստեղ զաւակն Ալպիոնի.
Ինչո՞ւ տըւաւ անուն բլրան այս խոնարհ.
Իր քերթուածներն եղան դրօշակ եւ կղզի,
Ամէն անգամ ուխտի կու գայ սիրտ մ'օտար:

Բանաստեղծներ ամէն դարու եւ ազգի
Մեծ սիրտ ունին՝ քան պարունակն աստղերու.
Ուր միշտ կ'ապրի դեղեցկութիւնն հողիի,
Իր պարզեւներն հէզ մարդկութեան բաշխելու:

Հերոսներ են, արդարութեան պահապան,
Իրենց գըրիչն արեան դըրօշ անմեղին.
Քանի՛ քերթուած թընդանօթի մը նըման
Երկինքն այրող պատերազմի բոց առին:

Բըլուրն հիմա զերդ սրբավայր մ'առանձին,
Կը ցոլանայ կապոյտներու մէջ երկու.
Ձիթենիներ կը մըմնջեն միասին,
Ալիքներուն հին զըրոյցներ պատմելու:

Հազար վարդեր եւ շուշաններ վարսագեղ
Բուրումն իրենց Լորտ Պայրընի յանձնեցին.
Երգեր փառքի, երգեր զըւարթ եւ ահազ,
Եկուորներուն դարերուն հետ կը խօսին:

ԼՐԱՊԱՐ ՄԱՍԵՆՆԵՐ

ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

Կապոյտէ կապոյտ կը բարձրանայ վեր,
Մեր զանգակատունն, ահա՛ զոյգ դարեր,
Ձերդ քարէ ճաճանչ կը սըլանայ վեր,
Մեր զանգակատունն հաւատքով շինուած:

Սուր նիզակ մը չէ, ինչպէս կարծեցին,
Փափուկ կապոյտին համբոյրն է խաչին.
Կը նայի հեռուն եւ ծովեր փրփուր,
Ներքեւ ժամատուն եւ կղզին խաչքուռ:

Ան կը տանի մեր աղօթքն աշխարհի,
Գիտէ Վենետիկ, այս աղդն արեւի.
Որքան հաճոյք է օտարին համար,
Ճանչնալ մեր անունն՝ դըրօշի պէս վառ:

Երկինքն իր վըրայ, իր շուրջը ծովեր,
Այնպէս շինեցին որ Մասիս տեսնէր.
Ի՞նչ քաղցըր բան է ըզդալ ամէն օր,
Հեռուէն եկող կարօտ եւ օրօր:

ՁԱՆԳԱԿՆԵՐԸ

Հինդ հատ են անոնք, հինդ զգայարաններ
Հողին ու բոյսին եւ վանականին,
Կը խօսին մեղ հետ հաղար լեզուներ,
Հայութեան կանչն են ծովերէն անդին:

Ա՛յնքան մեղմաղձ անոյշ կը հնչեն.
Հրեշտակ ըլլային եւ ես պաշտէի.
Ո՞վ տուաւ բառեր մեր քաղցըր լեզուէն,
Որ այնքան անոյշ գայ մեր աղօթքին:

Օդին մէջն են միշտ, արծիւ թեւաբաց,
Կայծակներու դէմ՝ կը ճեղքեն ամպեր,
Չեն սիրեր խաւար, երկինք տխրամած,
Գիտեն մեղ հետ լալ, գերեզմաններ բաց:

Յաճախ մեղմութեամբ կ'իջնեն կապոյտէն՝
Սենեակէ սենեակ դռներ բախելու.
Սիրեցի զիրենք մանկութեանս օրէն,
Տակաւին վերն են կեանքիս հսկելու:

Հինդ հատ են անոնք, հինդ զգայարաններ,
Անոնց որ եկան արեւու ճամբով,
Անոնց որ դրին այս կղզին մէջ սէր,
Չանդի ձայն առին, թաղուեցան յոյսով:

ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին սիրտն է ամբողջ կղզին,
Իր սուրբերով հայրենի.
Հին վանքերու պէս հիւրանոց կը թըլի,
Յողնութեամբ լի ճամբորդին:

Մեծ դուռ մ'ունի, դէպի երկինք կը բացուի
Առանց մեղքի մըթութեան.
Ծնրադիր են այնտեղ ջահեր, վանական,
Կարծես նստած Ընթրիքի:

Հոն Հայութիւնն իր հաւատքով միասին,
Սըկիհով լոյս կը խըմէ.
Լուսաւորիչ՝ որ սուրբերուն մէջ սուրբ է,
Կը մըկըրտէ մեղ կրկին:

Անբերելոյթ Աստուած մը կայ ամէնուր,
Խորհուրդ՝ ամէն քարի տակ.
Ամէն պատկեր՝ հին դարերու յիշատակ,
Աշխարհի դէմ վարադոյր:

Լոյս մը խաղաղ տապանակէն կը ծագի.
Աստուածութեամբն Յիսուսի.
Մեր հին լեզուն հոն կը փոխուի աղօթքի.
Հըրաշքը մօտ հըրաշքի:

Մեր ժամին մէջ ունի ամէն վանական
Անկիւն մը սուրբ խոկումի.
Խոր լըռութիւնն հառաչանքի կը փոխուի,
Երբ կ'աղօթեն բարձրաձայն:

Եկեղեցին իր խաչերով հըրեղէն,
Իր սուրբերով հայկական,
Սրբատուին է մեր մարտիրոս պատմութեան,
Մեր յոյսերուն ապաւէն:

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐԸ

Ա՛խ, ես ո՛րքան կը սիրեմ
Պատարագի մեր երգերն.
Ամբողջ սրտէս կը բըխին.
Խորհուրդ խորին, օրհնէքներ:

Զըկայ նըւազ մարդկային,
Այսպէս իջած երկինքէն.
Ա՛խ, ես որքան կը սիրեմ
Պատարագի մեր երգերն:

Ինչ քաղցր երգեր հին ու նոր,
Որ սիրտն ունին հայրերու...
Արցունքի չիթ կը թըւին
Պարզ ու մաքուր լըճակին:

Ա՛խ, ես ո՛րքան կը սիրեմ
Պատարագի մեր երգերն:

ԺԱՄԻՆ ՍՈՒՐԲԵՐԸ

Ժամին սուրբերն ես հոգիով կը տեսնեմ,
Լուսապըսակ Շընորհալին քաղցրադէմ,
Նարեկացին երկինքներու մէջ խորին,
Որոնք անշէջ կանթեղի պէս կը վառին:

Միշտ կը վառին, եւ աւելի լոյս կու տան,
Կանթեղն ինչպէս երկրպագու Սրբութեան.
Լուսաւորչի ձեռքէն շընորհք կը կաթի,
Նոր հիւսելու արքայական ծիրանի:

Հըռիփսիմէն իր շըղարշին մէջ ոսկեայ,
Արուսեակ մ'է, որուն նըմանը չըկայ.
Աղանակերպ Մանդուխտ ծաւի աչքերով.
Կը լեցնէ եկեղեցին երկինքով:

Ես կը սիրեմ մըմունջն իրենց աղօթքին,
Հաղորդութեամբ ամէնօրեայ խորհուրդին.
Թէեւ նըկար, բայց սիրոյ մէջ կենդանի,
Մեր սիրտն ունին եւ ամէն օր կը վառի:

Ու կը նային, միշտ կը նային սեւեռուն,
Դէպի խորանն ուսկից կու դայ սրբութիւն.
Խաչին վըրայ Յիսուսի հետ կը խօսին,
Այն հեշտ լեզուով՝ որ աղօթքն է Մեսրոպին:

Մեսրոպն այնտեղ բազուկներով կարկառած,
Նոյն հըրաշքն է Ոսկեդարէն մընացած,
Սրտին վըրայ տառերն այնքան կը փայլին,
Կարծես երկինք պիտի թռչին վերըստին:

Մեծ Հայրապետն ոսկեշուրջաւ, ոսկեխոյր.
Եը նըւիրէ Աստուածաշունչն հոգեբոյր,
Մեր ժամերուն, մեր հաւատքին յաղթանակ,
Զոր արիւնով ներկեց Վարդան նահատակ:

Կապոյտ ձեղունն աստղերն ունի երկինքի.
Ուր արծիւներ թափ կը կապեն Լամբրոնի.
Ամէն կամար, ամէն խորան յաղթական,
Կոթող մ'է մեր հայրենիքի փրկութեան:

Առաւօտեան արուեստին է, մեր ժամին,
Շուշանափայլ եւ մանկադէմ Տիրուհին.
Որուն դիմաց կու գայ ցաւով վանականն
Սիրտ բանալու հէք աշխարհի փրկութեան:

Երբ կը լեցուի ժամն երգերով հայկական,
Ինձ կը թըլի երկնահանդէս Հայաստանն.
Աղբ մը կու գայ իր քայլերով յաղթական,
Ու դար դարի կու տայ անունն Հայաստան:

ՏԵՍԻԼՔԻՆ ՅԵՏՈԹ

Նուէր՝ Ակարիչ Զօհրապ Քէշիշեանի

Տեսիլքէն յետոյ աչքերն էին վառ,
Ծիածանի գոյն եւ երանութիւն.
Տեսիլքէն յետոյ լացաւ Մըխիթար,
Գրկեց ջինջ երկինքն եւ Կոյսին անունն:

Տեսիլքէն յետոյ ծագեցաւ նոր լոյս,
Տըւաւ արեգակն աչքերուն համբոյր.
Կամար կապեցին՝ Սէր, Հաւատք եւ Յոյս,
Ոսկի գոյն առաւ Սեւանն անփրփուր:

Տեսիլքէն յետոյ մանուկ մը փոքրիկ
Անցաւ, վերացաւ երկինքն եօթներորդ,
Անդամ մ'ալ տեսնէր, հաղուած գեղեցիկ
Տիրամայրն եւ քովն երկու օրիորդ:

Տեսիլքէն յետոյ սրբացաւ մեր հողն,
Հիւղեր եւ վանքեր առին խունկի բոյր.
Կոյսը պիտի դար, ճակտին լոյսը քօղ,
Գրկելու նորէն այդ մանչուկն աղուոր:

Տեսիլքէն յետոյ ժամերգութիւն կար,
Կարծես Հայաստանն եղաւ նոր տաճար,
Մասիս, Արագած եւ գետ ու լըճակ,
Կ'երգեն արդ միակ սրտի մը համար:

Տեսիլքէն յետոյ, Մա՛յր, կանչեց տղան,
Անդամ մ'ալ տեսնեմ, փարիմ ոտքերուդ,
Արցունքն ոսկեցօղ ալտերէն իջան,
Կ'ուզէր տեսնել դէմքն եւ ոչ երեւոյթ:

Տեսիլքէն յետոյ, անշուշտ երազ չէր.
Դըպաւ իր սրտին, նրման էր վանքի,
Թող մտնեն, ըսաւ, մարդիկ երկնասէր,
Հայաստան կոչեն, որ լոյսը բացուի:

Տեսիլքէն յետոյ, Տիրամայրն հոն էր,
Կէս մը ճառագայթ, կէս մը շուք ոսկի.
Այդ սրբավայրէն ի՞նչպէս բաժնըէր,
Տանելու ուրախ լուրեր աշխարհի:

ԸՆԾԱՅԱՐԱՆԸ

Այստեղ մանուկն երկնքի պէս երջանիկ,
Իր յարկն ունի, իր արեւն ու լուսընկան.
Տարիներ կան եւ Մըխիթար գիրկն առած,
Կ'երգէ քաղցրիկ. Իմ անուշիկ, սիրտդ քաց:

Հոն աղմուկ կայ եւ ցնծութիւն նոր կեանքի.
Ո՞ր աշխարհէն այստեղ եկան մի առ մի:
Աչքեր լեցուն արեւներով հայրենի,
Որոնց վըրայ սէրը թառիլ միշտ կ'ուզէ:

Երամովին կը խառնըին իրարու,
Մէկը միւսէն ժըպիտ կ'ուզէ խաղալու.
Բոյնի մէջ են, թէ վարդապոյն մեծ չէնք է.
Երեւանն ալ կ'ըսեն այսպէս կարմիր է:

Քերթուած մ'է ան գրուած ձեռքով Միխիթարի,
Ծաղիկներ կան ոսկի թելով թիթեռնի.
Ի՞նչպէս կոչեմ զանոնք, արտոյտ՝ թէ սոխակ,
Քիչ է՝ ըսեմ Աստուած կերտեց հըրեշտակ:

Ո՛վ մանկութիւն, որ երազներ լուր ունի,
Մէկ բան կ'ուզէ, որ աշխարհէն բաժնուի,
Եւ օր մ'օծեն ձեռքեր նրման շուշանի,
Եւ օրհնութիւն բաշխէ՝ մասսունք նշխարի:

Իւրաքանչիւրն իր սրտին մէջն է պահած,
Այն սէրը որ կաթին հետ մայրն է տըւած.
Ի՞նչպէս մեծնան առանց սրտի հայկական,
Առանց կապոյտ տեսիլներու Սեւանի:

Կու դան անոնք օճախներէն հայրենի,
Ամէն մէկն իր ճակտին դիմաց աստղ մ'ունի.
Կը նային միշտ, դէպ' արեւելք կը նային.
Ե՞րբ Մեսրոպի պիտի տառերը փայլին:

Ես կը լըսեմ կանչերն իրենց ամէն օր,
Ծառերու տակ, ծաղիկներու մէջ աղուոր.
Ետ կը դառնամ, ու կ'աղաչեմ որ կանչեն,
Իմ դարունս ալ իջնէ անցեալ երկնքէն:

ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՄԱՏՈՒՌԸ

Հոն ուր արփին կը խոնարհի դէպի ծով,
Աչքերն իմ շատ են տեսեր.
Այնտեղ երգած, աղօթած եմ խոր սրտով,
Հասակս ի՞նչ էր, չեմ գիտեր:

Հոն մանկութիւնը կը մեծնայ սիրելով,
Մոմերուն հետ կը վառի.
Եւ արչալոյսն իր հոլանի վարսերով
Կ'օծէ ոտքերն Յիսուսի:

Խորան մ'ունի այդտեղ ամէն սիրտ փոքրիկ,
Սիրտ մը՝ վարդէն գեղեցիկ.
Լուռ կ'աղօթեն շարուած ինչպէս ճնճղուկներ,
Կըտուցներուն մէջ ծաղիկ:

Հաւատքն է մեծ, ցորենի չափ հոգիներ,
Ինչպէս ցօղին մէջ արփին.
Ո՛վ կայ իրենց ցոյց տալու խոր երկինքներ,
Պարզ աչքերէն ալ անդին:

Ձեմ փնտուր ես տիեզերքի խորութիւն.
Աշխարհի կեանք չեմ փնտուր.
Մանուկներ են, ունին այնքան պարզութիւն,
Սիրեմ իրենց նայուածքներ:

Եւ հայր մը կայ, զոր Մըխիթար կը կոչեն.
Որքան սիրեն՝ դեռ քիչ է.
Եւ Տիրամայրն եկած հեռու երկնքէ,
Աղօթքին հետ աղօթք է:

ՀՐԱՇՔԻ ՄԱՏԵԱՆԸ

Վաղուց է որ ես կը ճանչնամ այդ մատեանն,
Խորհուրդի գիրք կը կոչուի.
Դեղին է ան, մազաղաթի դոյն ունի,
Ձեռքերն ինչպէս ծերութեան:

Շատ հին ատեն, քարայրի մէջ գըրեցին,
Երբ մարտ ունէր Հայաստան.
Տառերն անոր կարծես բիծեր են արեան,
Սուր դաշոյնի շատ նրման:

Ու դայն յետոյ սրտի երգով պատեցին,
Մէկը լացաւ, միւսն երգեց,
Կուրծքի վըրայ դըրին ինչպէս վարդ մը մեծ,
Խորհուրդն եղաւ հայ կեանքին:

Ամէն բառի տըւին իմաստ մը թաքուն,
Ա՛յս է, ըսին, շունչ եւ առ.
Կարդացի ես, դրտայ սրտիս շատ յարմար,
Գըտայ կեանքիս զօրութիւն:

Վաղուց է որ ես կը ճանչնամ այդ մատեանն
Իր տառերով երկաթէ.
Խորանին քով մեզի համար կ'աղօթէ,
Պաշտպան ամբողջ Հայութեան:

ՄԵԾ ԳՐԱՏՈՒՆԸ

Մտքերով լեցուն, ազնիւ խոհերով,
Մեր գլխատան մէջ հին աշխարհ մը կայ.
Աղբեր ու մարդիկ խաղաղ հողերով,
Դարեր ու դարեր մէկտեղ են հիմա:

Դահլիճ մ'է ծաղկած, երկինքը վըրան,
Եւ ո՞վ երազեց հոն փառքն Հայաստան,
Ու Սահակին քով բաղմեցուց Մեսրոպ,
Թող Հայերն, ըսաւ, հոս միշտ ուխտի դան:

Ի՞նչ աչքի յարմար կան որմեր չըքեղ.
Բուրաստան ըսեմ, ա՛խ, սիրտըս չ'երթար,
Ըսեմ Մըխիթար երգեց մեզ համար,
Թող այդպէս ըլլայ, մեր լոյսն հանճարեղ:

ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

Մտքերով լեցուն, ազնիւ խոհերով
Ձեռագրատան մէջ ես երազ տեսայ.
Իմ երազն երգ էր բամբուկի լարով.
Հովիւի պէս մեր դաշտերով անցայ:

Հաղար մատենաներ ինձ բացին էջեր.
Ծով եղաւ մեր հողն, ալիք եղաւ լեռն.
Խօսեցան ինձ հետ անթիւ անուններ,
Մեր գլխատան մէջ դիւցազներ տեսայ:

Այն մանրանըկար պատկերներն ոսկի
Համբուրած եմ ես, սուրբի անունով.
Երկինքէն առին լուսնակի կաշի,
Գլընց վանականն իր դողդոջ ձեռքով:

Փոքրիկ բայց չըքեղ մատենադարանն
Ի՞նչ երկինք կոչեմ, դեռ կայ աւելի.
Ոսկեդար կոչեմ, կայ Միխիթարեանն,
Փառքն ըլլայ Հայուն, լոյս Մըխիթարի:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԵԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

BIBLIOGRAPHIE DES PUBLICATIONS DE L'ABBÉ MEKHITAR

1. ԹՈՎՄԱՍ ԳԵՄՐԱՑԻ, Յաղագս համահեծեմանն Քրիստոսի (Թրգ. Յովհաննէս Վրդ. Կոստանդնուպոլսեցի): Կ. Պոլիս 1700 (Հոկտ.), էջ 352, (16,4×10,6 հրդմ.):
2. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտ մեկնութիւն Երգոյ Երգոցն Սողոմոնի: Կ. Պոլիս 1701 (Յունուար 8), էջ 258, (16,2×10,6 հրդմ.):
3. ԳԻՐԳ ՄԵԿՆՈՒՔԵԱՆ ՅԱՅՏՈՒՔԵԱՆՆ ՍՐՐՈՅ ԲՕԽԱՆՈՒ ԱԼԵ՝ տարանչի (Թրգ. լատիներէնէ՝ Պետրոս Վրդ. Թիֆլիզեցի): Կ. Պոլիս 1701 (Յունուար 8), «Ներ տպարանում Սրբոյ էջմիածնի եւ Սրբոյ Սարգսի Զօրավարի», էջ 208, (16,4×11 հրդմ.):
4. ԲԱՆԱԼԻ ՉԵՐՄԵՆԱՆԳԱԿԵՐԱՆ («Գիրգ մտածական աղօթից», Թրգ. լատիներէնէ եւ իտալերէնէ՝ Պետրոս Վրդ. Թիֆլիզեցի): Կ. Պոլիս 1701 (Մայիս 28), էջ 128, (16,2×10,8 հրդմ.):
5. ՄԵԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ, Խոկումն վարուց, պարունակող բազմաց եւ զանազանից չեքմեանդակամաց աղօթից: Կ. Պոլիս 1705 (Յունուար 20), էջ 97, (10×7 հրդմ.): Վերհրտ. 1753ին եւ 1810ին, «Ձայն Քրիստոսի» դրբին հետ (տե՛ս Թ. 56):
6. ԱԼՊԵՐՏ ՄԵԾՆ, Համառօտութիւն Աստուածաբանութեան (Թրգմ. լատիներէնէ՝ Ժ. Ղարուն, վերաքննուած Մի. Արքահօր կողմէ): Վենետիկ 1715 (Յուլիս 22), տպ. Անտոն Պորթուի, էջ 512, (17,2×10,8):